ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 48 Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Քաղաքացիներ Հուսիկ Նորիկի Գրիգորյանին և Սյուզաննա Հայկի Գրիգորյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0009-0010) իրենց սեփական հողամասի վրա բնակելի տան կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 26

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 49 Լ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 37-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում ասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1890-Ն որոշման հավելվածի 11-րդ կետը, Եղեգիս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբեր 17-ի «Եղեգիս համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 23-Ն և 2024 թվականի փետրվարի 19-ի «Եղեգիս համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավարման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին» N22Ա որոշումները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը իրականացնելու, գործընթացի փուլերի՝ նախապատրաստական աշխատանքների կազմակերպման, իրազեկման, առաջարկների ընդունման և նախնական գնահատման, ծրագրերի իրականացման և հաշվետվությունների ընդունման նպատակով, ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ահարոն Գաբրիելյան (համայնքի ղեկավարի առաջին տեղակալ),
նախագահի տեղակալ՝ Սամվել Մարտիրոսյան (համայնքի ղեկավարի տեղակալ),
անդամներ՝ Աննա Դանիելյան (համայքապետարանի աշխատակազմի քարտուղար),
Մուրադ Օհանյան (համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ),
բնակավայրերի վարչական ղեկավարները,
Նարեկ Մարտիրոսյան (համայնքի ավագանու անդամ, ավագանու ֆինանսատնտեսական և զբոսաշրջության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ),
Հունան Ստեփանյան («Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն):

2.Հաստատել հանձնաժողովի լիազորությունները՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

4.Հաստատել առաջարկ-նախագծերի ներկայացման հայտի և նախնական գնահատման աղյուսակի ձևաթղթերը՝ համաձայն հավելված 3-ի:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 26 ք.Եղեգիս

Հավելված 1

Եղեգիս համայնքի ղեկավարի

2024 թվականի փետրվարի 26-ի N 49-Լ որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանձնաժողովը՝

1.Կազմակերպում, իրականացնում և համակարգում է մասնակցային բյուջետավորման գործընթացը:

2. Կազմում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում յուրաքանչյուր տարվա մասնակցային բյուջետավորման գործընթացի պլան-ժամանակացույցը:

3. Կազմակերպում է գործընթացի մասին համայնքի բնակչության իրազեկմանն ուղղված տարբեր միջոցառումներ՝ համագործակցելով տեղական լրատվամիջոցների հետ:

4.Համագործակցում է հասարակական կազմակերպությունների, ակտիվ բնակիչների, կամավորների և այլ կառույցների հետ:

5. Իր կազմից ձևավորում է տարբեր աշխատանքային խմբեր:

6.Իրականացնում է գործընթացի համար անհրաժեշտ ադմինիստրատիվ և լոգիստիկ աշխատանքներ, նախապատրաստում է տարբեր նյութեր և փաստաթղթեր, մշակում կամ համաձայնեցնում է տեղեկատվական նյութերի բովանդակությունը՝ հրապարակումների, հոդվածների, հարցազրույցների, ներկայացումների, բուկլետների, պատսառների, տեսանյութերի թեմաները:

7.Ապահովում է գործընթացում բնակչության տարբեր խմբերի ներգրավվածությունը՝ կազմակերպելով հանդիպումներ, ժողովներ, լսումներ և քննարկումներ:

8.Համակարգող և խորհրդատվական աջակցություն է տրամադրում քաղաքացիներին և նախաձեռնող խմբերին առաջարկների նախապատրաստման և ներկայացման գործընթացում:

9. Կազմակերպում է առաջարկների ընդունման և քվեարկության էլեկտրոնային համակարգի պատշաճ գործունեությունը:

10.Կազմակերպում է առաջարկների թղթային տարբերակով ընդունման և քվեարկության գործընթացը:

11.Գնահատում է քաղաքացիների և նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված առաջարկների հայտերը:

12.Կազմում է քվեարկության դրվելիք առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով:

13.Կազմում է սահմանված չափանիշներին չհամապատասխանող առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով:

14. Ամփոփում է էլեկտրոնային և թղթային քվեարկությունների արդյունքները:

15.Անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում առաջարկություն՝ գործընթացի փուլերի ժամկետների փոփոխության վերաբերյալ:

16.Կազմում և համայնքի ղեկավարին է ներկայացնում գործընթացի վերաբերյալ ընթացիկ և տարեկան հաշվետվություններ:

17.Մասնակցային բյուջետավորման գործընթացի բոլոր փուլերում բնակչության տեղեկատվական արշավի պատասխանատուն է:

Աշխատակազմի քարտուղար՝ ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված 2

Եղեգիս համայնքի ղեկավարի

2024 թվականի փետրվարի 26-ի N 49-Լ որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

Հանձնաժողովը՝

1. Իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

2. Նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:

3. Հանձնաժողովը իրավազոր է, եթե նիստին ներկա է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

4. Որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդով:

5. Ձայների հավասար բաժանման դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

6. Որոշումները ստորագրում են նիստին ներկա անդամները:

7. Հանձնաժողովի աշխատանքների ադմինիստրատիվ և կազմակերպչական մասը, ինչպես նաև նիստերի արձանագրումը ապահովում է հանձնաժողովի քարտուղարը, որին իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի անդամները՝ առաջին աշխատակարգային նիստի ժամանակ:

8.Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը:

9. Հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդը:

10. Հանձնաժողովի աշխատանքային խմբերի գործունեությունը կազմակերպվում է խորհրդակցությունների և քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կազմվում են զեկուցագրեր:

11. Զեկուցագրերը ներկայացվում են հանձնաժողովի նախագահին և քննարկվում են հանձնաժողովի նիստում:

12.Հանձնաժողովի նախագահի բացակայության ժամանակ նիստերը հրավիրում և վարում է նախագահի տեղակալը:

13.Հանձնաժողովը գործընթացի իրականացման ընթացքում ներկայացված առաջարկները քվերակության է ներկայացնում հետևյալ չափանիշներին համապատասխան դիտարկելու դեպքում՝

ա)առաջարկ-նախագիծը պետք է իրականացվի Եղեգիս համայնքի տարածքում,

բ)առաջարկ-նախագիծը պետք է բացառապես վերաբերի Եղեգիս համայնքին, բխի համայնքի խնդիրներից, իսկ դրա իրագործումը լինի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներում,

գ) առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ նախահաշվային գինը չպետք է գերազանցի ավագանու կողմից մասնակցային բյուջետավորման համար հատկացված առավելագույն գումարը,

դ) առաջարկ-նախագիծը պետք է իրագործելի լինի ընթացիկ բյուջետային տարվա ընթացքում և չպետք է համընկնի համայնքի ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ,

ե) առաջարկ-նախագծի իրականացումը պետք է տեխնիկապես հնարավոր լինի,

զ) առաջարկ-նախագծերի գնահատման ժամանակ կարող են դիտարկվել լրացուցիչ չափանիշներ՝ ելնելով համայնքի խնդիրների առաջնահերթություններից:

Աշխատակազմի քարտուղար՝ ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված 3

Եղեգիս համայնքի ղեկավարի

2024 թվականի փետրվարի 26-ի N 49-Լ որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՌԱՋԱՐԿ-ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ՀԱՅՏ

1	Առաջարկ-նախագծի հեղինակի անուն, ազգանուն (անվանում)	
2	Կոնտակտային տվյալներ (հասցե, հեռախոս, էլ. փոստ)	
3	Առաջարկ-նախագծի անվանումը, նկարագրությունը	
4	Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկ-նախագիծը	
5	Առաջարկ-նախագծի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները	
6	Առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները	

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՌԱՋԱՐԿ-ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԱՂՅՈՒՍԱԿ

N	Առաջարկ-նախագծի անվանումը	Չափանիշները						Ներկայացվել է քվեարկության
		Իրականացվելու է համայնքի տարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու սահմանած սահմանաչափը	Չի համընկնում համայնքի ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել	Համապատասխանում է համայնքի խնդիրների լուծման առաջնահերթություն-ներին	
		Բավարարում է/չի բավարարում	Բավարարում է/չի բավարարում	Բավարարում է/չի բավարարում	Բավարարում է/չի բավարարում	Բավարարում է/չի բավարարում	Բավարարում է/չի բավարարում	Այո/ոչ

Աշխատակազմի քարտուղար՝ ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 50 Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ԵՐՋԱՆԻԿ ԹՈՎՄԱՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10031TGUPNDQ ծածկագիրը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող հանգուցյալ Շահեն Մկրտչյանի (ընտանիքի գլխավորը) և հանգուցյալ Երջանիկ Թովմասի Ղազարյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0010-, մակերեսը՝ 0,07914 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 1-ին փողոց, 11-րդ բնակելի տուն հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 28

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 51 Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ) ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2023թ. թիվ 165-Ն որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Ա/Ձ Սահակ Հովհաննիսյանին տալ Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական տարածքում ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն՝ տարվա կտրվածքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 28

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 52 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

1)գյուղ Աղնջաձոր, կադաստրային ծածկագիր 10-007-0163-0001, մակերեսը 0,09576հա, արոտավայր հողատեսք,

2)գյուղ Հորս, կադաստրային ծածկագիր 10-031-0107- , մակերեսը 0,54761հա, վարելահող, այլ հողատեսք, որից վարելահող 0,34139հա, այլ հողատեսք 0,20622հա,

3)գյուղ Հորս, կադաստրային ծածկագիր 10-031-0107- , մակերեսը 1,32406հա, վարելահող, այլ հողատեսք, որից վարելահող 0,62561հա, այլ հողատեսք 0,69845հա,

4)գյուղ Հերմոն, կադաստրային ծածկագիր 10-029-0108- , մակերեսը 0,66հա, այլ հողատեսք,

5)գյուղ Հերմոն, կադաստրային ծածկագիր 10-029-0109- , մակերեսը 1,49868հա, արոտավայր հողատեսք:

2.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

1)կադաստրային ծածկագիր 10-029-0022- , մակերեսը 0,09709հա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 28

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 53 Ա

ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ, ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԻԳՈՐ ԵՐՎԱՆԴԻ ԽՈՒԴՈՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՇԱՃ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջներով, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Շատին գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Իգոր Երվանդի Խուդոյանի հուղարկավորությունը պատշաճ կազմակերպելու համար Եղեգիս համայնքի բյուջեի «Այլ նպաստներ բյուջեից» 10.7.1 51 ոլորտի 4726 «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» հոդվածից հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 29

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 54 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգիս, գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 27 հասցեում գտնվող քաղաքացի Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝10-029-0014-0007) կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10029RPPNQMV ծածկագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն որոշման 2-րդ գլխի 18-րդ կետի բ) ենթակետի դրույթները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 27 հասցեում գտնվող քաղաքացի Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝10-029-0014-0007) կառուցված ինքնակամ կառուցված 19,9 ք/մ մակերեսով հասարակական նշանակության կառույցը (առևտրի սրահ) ճանաչել օրինական և շինությունների նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքը (կցվում է շինությունների հատակագծերը):

2.Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2022GC9JLT:

3.Օրինականացման համար սահմանված վճարը շինությունների համար 1 քմ-ը կազմում է 1262 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը 25 113,8 ՀՀ դրամ, որը պետք է մուծվի 900 355 113 060 հաշվեհամարին:

4.Անշարժ գույքին տրամադրել Եղեգիս համայնք գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 27 հասցեն:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 29

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01-Ը ՄԱՐՏԻ 2024 թվականի N 55 Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ) ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2023թ. թիվ 165-Ն որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Ա/Ձ Մերուժան Թադևոսյանին տալ Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի վարչական տարածքում ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն՝ տարվա կտրվածքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. մարտի 01

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01-Ը ՄԱՐՏԻ 2024 թվականի N 56 Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ 03-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019Թ. ԹԻՎ 238Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596-Ն որոշման 124-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հիմք ընդունելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պարտականությունները կատարողի գրությունը՝ համայնքի ղեկավարի 03.12.2019թ. թիվ 238Ա որոշմամբ տրված շինարարության թույլտվության սահմանված շինարարության ժամկետը երկարաձգել մինչև 31/12/2024թ.:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2024 թ. մարտի 01

հ.Եղեգիս